

«ՎԱՆԱԶՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Զ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 15.05.2026թ. թիվ 262 Ն/Մ հրամանի

ՎԱՆԱԶՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ



Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 10, 13.05.2026թ.

Վանաձոր

2026թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգով սահմանվում է Համալսարանի ամբիոնի վարիչի (այսուհետ՝ Ամբիոնի վարիչ) պաշտոնի հավակնորդների առաջադրման, մրցութային ընտրության անցկացման ու ընտրված պաշտոնում հրամանագրման կարգը:
2. Սույն կանոնակարգի ընդունման իրավական հիմքերն են ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Իրավական ակտերի մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը և ներքին իրավական ակտերը:
3. Ամբիոնի գործունեությունն իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի վարիչը, որն ընտրվում է մինչև 5 տարի ժամկետով:
4. Ամբիոնի վարիչն ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդի (այսուհետ՝ Գիտխորհուրդ) կողմից:
5. Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:



II. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵՎԱՍՏՈՒՆԵՐԻ ԱՈՍԱՐԴՐՈՒՄԸ, ՄՐՑՈՒՄԵՐԸ ԵՎ ՏՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ,

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԼԵՆԱՆԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՈՒՄԸ

6. Ամբիոնի վարիչի մրցութային ընտրությունը նշանակվում է ռեկտորի հրամանով, և այդ մասին հայտարարությունը հրապարակվում է Համալսարանի կայքէջում և սոցիալական ցանցի էջերում:
Ամբիոնի վարիչի պաշտոնի մրցույթի վերաբերյալ հայտարարությունն ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակվում է Համալսարանի կայքէջում և սոցիալական ցանցի էջերում:
7. Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի ներկայացման վայրն ու վերջնաժամկետը:
8. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին կարող է մասնակցել ամբիոնի ուղղվածությանը համապատասխան գիտական կոչում և գիտական աստիճան ունեցող անձը (մշակույթի և սպորտի բնագավառի ամբիոններում՝ գիտական կոչում և/կամ գիտական աստիճան ունեցող անձը):
9. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները աշխատանքային գործունեության նախորդ 10 տարում պետք է ունենան առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ:
10. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում Համալսարանի ընդհանուր բաժին են ներկայացնում դիմում (Հավելված 1), կադրերի հաշվառման անհատական թերթիկ, ինքնակենսագրություն, գիտական աստիճանը և/կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները, տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը, ամբիոնի առաջիկա հնգամյա գործունեության ծրագիրը:

21. Նախագահողի առաջարկով փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով Գիտխորհրդի որոշմամբ՝ Գիտխորհրդի անդամներից ընտրվում է հաշվիչ հանձնաժողով՝ կենտ թվով:

22. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հաշվիչ հանձնաժողովի նախագահ:

23. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

24. Պաշտոնի հավակնորդները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ և քվեարկությանը չեն մասնակցում:

25. Գիտխորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

26. Գիտխորհրդի յուրաքանչյուր անդամ ստորագրում է Գիտխորհրդի անվանացուցակում, վերցնում մեկ քվեաթերթիկ և քվեախցում կատարում գաղտնի քվեարկություն, քվեաթերթիկը նետում քվեատուփի մեջ:

27. Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է նշվի թեկնածուի ազգանունը, անունը, «կողմ» և «դեմ» բառերը (Հավելված 2): Մեկ թափուր տեղի համար մեկից ավելի հավակնորդի դեպքում գիտխորհրդի անդամը քվեարկում է մեկ հավակնորդի օգտին, կամ բոլորին դեմ եմ (Հավելված 3):

28. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրություն (Հավելված 4):

29. Ընտրողը քվեաթերթիկում քվեատուփի մոտ տրամադրվող գրիչով համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի ազգանվան-անվան դիմաց՝ «կողմ» գրառմամբ վանդակում՝ V նշանով: Մեկ թեկնածուի առկայության պարագայում ընտրողը V նշանով նշում է կատարում «կողմ» կամ «դեմ» գրառումներով վանդակներից միայն մեկում:

30. Քվեաթերթիկում արգելվում է կատարել չնախատեսված նշումներ, ընդգծումներ և այլ նշաններ:

31. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում մեկական քվեաթերթիկ, հայտարարում քվեարկության արդյունքը և փոխանցում հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար: Հաշվիչ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը կարող է պահանջել քվեարկության դնել քվեաթերթիկի անվավեր լինելու հարցը: Հավելված 4-ում նշված են քվեաթերթիկի վավեր, անվավեր նմուշների օրինակներ:

32. Քվեաթերթիկն անվավեր է, եթե անհանված նմուշի քվեաթերթիկում առկա է

1. ավելորդ գրառումներ, նշումներ, ընդգծումներ,
2. նշումներ են ներառվում մեկից ավելի թեկնածուների օգտին,
3. որևէ նշում չի ներառում
4. մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ եմ» և «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է ներառում.

33. Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումը ընդունվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ

34. Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը: Եթե քվեաթերթիկն անվավեր ճանաչելն ազդում է ընտրությունների արդյունքների վրա, ապա այդ հարցի



Հավելված 1

Օրինակելի ձև

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամի ռեկտոր,

պարոն _____ ին

_____ (անունը, ազգանունը)

_____ (հասցեն, հեռախոսը)

Դիմում

Խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու 202_ թ. _____ - ի _____ - ին

ՎՊՀ _____ ֆակուլտետի _____ ամբիոնի վարիչի
պաշտոնում տեղակալման համար հայտարարված մրցույթին:

Դիմումին կցում եմ հետևյալ փաստաթղթերը.

1. Կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
2. Ինքնակենսագրություն,
3. Գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները,
4. Տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակ,
5. Ամբիոնի առաջիկա հնգամյա գործունեության ծրագիրը:



Դիմող՝ _____ 201_ թ.

(ստորագրություն)

(Ծանոթություն՝ Համալսարանում աշխատող պաշտոնի հավակնորդը չի ներկայացնում կ.կ. 2,3- ում նշված փաստաթղթերը, իսկ կ.կ. 4- ում նշված փաստաթղթում ցույց է տալիս միայն նախորդ մրցույթից հետո տպագրված աշխատանքները):

Քվեաթերթիկի օրինակելի ձև

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական Համալսարանի գիտական խորհրդի,
նիստում _____

_____ պաշտոնի փակ, գաղտնի քվեարկության

1.	թեկնածուի ազգանուն, անուն	կողմ	
		դեմ	



«Կողմ» կամ «դեմ» լինելու դեպքում քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է V նշումը:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական Համալսարանի գիտական խորհրդի,
նիստում _____

պաշտոնի փակ, գաղտնի քվեարկության



Հ/Հ	ազգանուն, անուն	նշում
1.	թեկնածուի ազգանուն, անուն	
2.	թեկնածուի ազգանուն, անուն	
3.	թեկնածուի ազգանուն, անուն	
4.	բոլորին դեմ եմ	

Որևէ թեկնածուի «կողմ» լինելու կամ «բոլորին դեմ» լինելու դեպքում քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է V նշումը:

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվիչ հանձնաժողովի նիստի

« » « » 202 թ.

քաղաք Վանաձոր

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական Համալսարանի գիտական խորհրդի (այսուհետ՝ Գիտխորհուրդ) _____ նիստում հետևյալ կազմով՝

1. _____
2. _____
3. _____

Գիտխորհրդի _____ անդամներից ներկա էին _____-ը: Քվեարկվել է (են) _____ պաշտոնի թեկնածուները

(ները): Քվեարկությանը մասնակցել են Գիտխորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ: Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են թեկնածուի ազգանունը, անունը կողմ, դեմ, անվավեր, թեկնածուի ազգանունը, անունը կողմ, դեմ, անվավեր:

դեմ, անվավեր:

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ պաշտոնում ընտրվել է (չի ընտրվել) _____

Կամ՝

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում _____ պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

1. _____
2. _____

3. _____ Մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ _____ անդամներ _____

Հաշվիչ հանձնաժողովի _____

